№ 229 Դեկտեմբերի 9 (21) 1881 Դեկտեմբերի 9 (21) № 229

ՏԱՄԱՆԵՐՈՒԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ. կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Ստորագրողներին դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшака»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ֆրանսիա։ Հրդեհ Վլիննայի թատրոնի մէջ։ Արտաքին լուրեր։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ԳԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Դաւիթ բէկ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 2 դեկտեմբերի

Այս օրերս մի օր մտնելով Քիւրքճեանի մօտ, գտայ Նարան, աչքերը յատակի վրա սեւեռած, խոր մտածութեան մէջ։ Նա ինձ երեսց մի այլ Մեֆիստոֆելէս իր մեծ գլխով, թուխ և թանձր և թնջուկ մազերով, մութ կերպարանքով, մըռայլ աչքերով, յատկորոյ քթով, սրվերջ և ծայրը դէպի մի կողմ ծռուած մօրուքով. մտածում էր, գլուխը ուսի վրա թեք։ Բարի, Քիւրքճի եղբայր. ինչ բան է, հարցրի։ Չը գիտես, եղբայր, տուտս քանդվում է, պատասխանեց, ցոյց տալով ինձ մի ապակի, որի վրայից ժամանակի ցեցը կրծում էր Անոյ մի հրաշալիքը։ Ցաւալի էր տեսնել այնքան քրտինքի, ծանրավաստակ օրերի, ահագին գիշերների մի գործ, առանց հեղինակի ցանկացած արդիւնքին հասնելու, առանց ազգային դաստիարակութեան և ազգային պատմութեան ուսուցման գործին ի նպաստ գործադրվելու, յանկարծ տապալուած։ Ահա ուրիշ ապակիներ, ահա ուրիշ ապակիներ, նոյնպէս կըրծոտուած. բոլորն էլ թանգագին տեսարաններ. աւաղ, կորչում է աշխատանքս, մինչև երկու հարիւր էլ է չունեմ պատրաստուած օրինակներս։ Եւ արուեստագէտը իր կուրծքին մէջ զգում էր մի սաստիկ մրրիկ, որի շունչը պնչներէն ծխի նման էր դուրս գալիս։ Նա ինձ երեսում էր մի գիւղացի մի ահագին հրէշի հետ մաքառելիս։ Վերջապէս ժայթքեց իր ներքին հուրն ու մուրը մի չանթորոտ յանդիմանութեամբ։

Մի այսպիսի ժամանակում, ուր ազգային հերոսները վիսում են լրագրերի մէջ, իրենց յօդուածներով ու առաջարկութիւններով, անուն հանելու բուռն տենչանքով, մի Անի, մի հայրենի աւերակ, որ ոչ նուաղ զօրութիւն է տալիս նոցա, ճակատները բարձրացնելու և իրենց համար գոյութեան իրաւունք պահանջելու, մի լուսանկար Անի, որ զմայլեցնում է Վիրիսովների պէս աշխարհահռչակ մարդոց և մի նախանձման գրգռ է հրատարակվում, Վենետիկի աշխարհագրական ժողովի մէջ, Հ. Գ. Ալիշանի ընտրով, և որի համար այլազգի լրագրեր առաջարկում են իրենց ծառայութիւնը քարոզութիւն (propogande) անելու, մի Անի կործանվում է հայ հերոսների ձեռքի տակ. նորա ճարտարագործութեանց պատկերներն եղծվում են արուեստագիտի դարանների մէջ, և չորս միլիոնէն աւելի հայի համար 200 օրինակ դեռ չէ էլ տպված, և հարիւր ու քսան օրինակ հաւել է ծախսված։

Արուեստագէտը չէր մոռանում իր ջերմ շնորհակալքը յայտնել «Մշակ» լրագրի մասին, որ արձագանք տուեց Վիրիսովի հիացական ձայնին և բաց արաւ իր էջերը Անոյ աւերակներին տարագրվելուն։

*) «Մշակ» լրագրից յայտնի է որ միայն փամբակի Ղարաքիլիսի ուսումնարանը մի հաւաքածու գնել է։

ԴԱՒԻԹ ԲԷԿ

ՊԱՏՄԱԿԱՆ Վէպ։

(1722—1728)

—

Ժե։

Անձրևային մառախլապատ օրին յաջորդեց պարզ. աստղազարդ գիշեր։

Զեվու *) բերդը պաշարված էր հայոց զօրքերով։ Պարսից զօրքերը ամեն կէսերի վրա յաղթվելով, մի մասը ջարդված էր, մի մասը գերի էր ընկած, իսկ մնացածները փախել, պատսպարվել էին բերդի մէջ։ Դէպի բերդը տանող բոլոր կամուրջները պարսիկները քանդել էին։ Հաղորդակցութիւնը դրսի հետ կտրված էր։

Զեվու բերդը գտնվում էր Հալիձորի գետի ձախափի վրա. հին Բաղաբերդից մէկ մղոն հեռաւորութեամբ դէպի հարաւ։ Սիւնեաց աշխարհի շատ բերդերի նման, նա շինված էր մի այնպիսի տեղում, ուր երկու գետեր խառնվելով միմեանց, կազմում են մի սուր եռանկիւնի։ Մի այսպիսի եռանկիւնու մէջ գտնվում էր բերդը։ Հարաւային կողմից գալիս էր Հալիձորի գետը, իսկ արևմտեան կողմից Գեղվայ գետը կորելով նրան, կազմում էր եռանկիւնին։ Նա Ղափանի միւս բերդերի նման բոլորվին բարձրանդակի վրա չէր գտնվում, այլ նեղ ձորի մէջ, սեղմված լինելով երկու գետերի գրկում։ Մի կողմից միայն բարձրանում էր դէպի արևմտեան կողմի բլուրը, ուր կանգնած էր անմատչելի միջնաբերդը։

Բերդը պատած էր հաստ պարսպով, որը շուրջանակի ամրացրած էր բրգաձև աշտարակներով։ Պարսպի շուրջը տարածվում էր մի երկրորդ ամրութիւն։ դա էր ածուի հողից կազմված թանձր թումբը, որը իր փափուկ կողքերի մէջ այնպէս էր ընդունում թնդանօթների ռումբերը, որպէս փետուրեայ բարձը ընդունում է իր մէջ գնդասեղի ծայրը, առանց ցաւ զգալու։ Դա մի ամուր պատնէշ էր, միայն հողից թափված։ Այդ պատնէշի մօտով, խորին, բնական խրամատների միջով, որոտալով, քարերին և ժայռերին զարկվելով, անցնում էին Հալիձորի և Գեղվայ գետերը, որոնք նոյն իսկ բերդի տարածում միանում էին, նրա գիրքը աւելի անմատչելի կացուցանելու համար։

Միջնաբերդի մէջ այդ միջոցին տիրում էր կատաղեալ իրարանցում։ Կարծես, մի չար մարգարէ գուշակութեամբ մարդիկ համոզված լինէին, թէ ահա մի քանի րոպէից յետոյ աշխարհս կը կործանվի, և ամեն ինչ կը լուծվի, կը կորչի։ յաւիտենական ոչնչութեան մէջ։ Ամեն ոք սարսափելի տագնապով սպասում էր վճռական րոպէին։ Խանի կանանոցի մէջ յուսահատութիւնը աւելի սոսկալի էր։ Չը նայելով, որ գիշերային բաւական անցել էր և այդ ժամուն բոլոր խառնուիները հանգստացած էին լինում իրանց փափուկ օթեակներում, իսկ այդ գիշեր դեռ ոչ ոք քնած չէր։ Նրանք ընթրիք անգամ չէին վայելել։ Բաղմաձև խոհանոցի բոլոր պատրաստուելը Բաղմաձև խոհանոցի բոլոր պատրաստուելը Թիւնները պղնձէ մեծ մատուցարանների վրա պառկում էին։ Ներքինիները իրանց շողոքորդու